

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևարդում: Պատասխանների ճևարդի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

Ա մակարդակ

I. Տրված են 14 և 35 թվերը:

1

Գտնել այդ թվերից մեծի և փոքրի տարբերության հակառակ թիվը:

- 1) -49
- 2) -21
- 3) 21
- 4) 49

2

Գտնել այդ թվերի գումարը 5-ի բաժանելիս ստացված մնացորդը:

- 1) 1
- 2) 9
- 3) -4
- 4) 4

3

Գտնել այդ թվերի ամենամեծ լնդիանուր բաժանարարը:

- 1) 1
- 2) 3
- 3) 7
- 4) 5

4

Գտնել այդ թվերի ամենափոքր լնդիանուր բազմապատիկը:

- 1) 490
- 2) 140
- 3) 245
- 4) 70

II. Գտնել արտահայտության արժեքը.

5 $\frac{7}{2} \left(\frac{4}{7} - 1 \right)$

- 1) -1,5
- 2) 1,5
- 3) 1
- 4) 0

6 $\frac{x+7y}{x+y}$, եթե $\frac{y}{x} = 3$:

- 1) 3
- 2) 1
- 3) $\frac{11}{2}$
- 4) 21

7 $(\sqrt{7}-1)^2 + (\sqrt{7}+1)^2$

- 1) 14
- 2) 2
- 3) 16
- 4) 4

8 $12 \sin \alpha$, եթե $\cos \alpha = -\frac{\sqrt{7}}{4}$ և $\pi < \alpha < \frac{3\pi}{2}$:

- 1) 9
- 2) $\frac{\sqrt{23}}{4}$
- 3) -9
- 4) $-\frac{\sqrt{23}}{4}$

III. Լուծել հավասարումը.

9 $\frac{3x-1}{5x+5} = \frac{1}{2}$

- 1) -1
- 2) 3
- 3) 7
- 4) 5

10 $\sqrt{x^2 - 4x} = x - 1$

- 1) -2
- 2) արմատ չունի
- 3) 4
- 4) 2

11 $4^x + 4^{x-1} = 5$

- 1) 0
- 2) 0,25
- 3) 0 և 1
- 4) 1

12 $\sin\left(3x - \frac{\pi}{3}\right) = 0$

- 1) $-\frac{\pi}{9} + \frac{\pi k}{3}, k \in \mathbb{Z}$
- 2) $\frac{\pi}{9} + \frac{2\pi k}{3}, k \in \mathbb{Z}$
- 3) $\frac{\pi}{9} + \frac{\pi k}{3}, k \in \mathbb{Z}$
- 4) $\frac{\pi}{3} + \frac{\pi k}{3}, k \in \mathbb{Z}$

IV. Լուծել անհավասարումը.

13 $\frac{2}{x} < 1$

- 1) $[2; +\infty)$
- 2) $(2; +\infty)$
- 3) $(-\infty; 2)$
- 4) $(-\infty; 0) \cup (2; +\infty)$

14 $\sqrt{2x-5} < 5$

- 1) $[2,5; +\infty)$
- 2) $(-\infty; 15)$
- 3) $(2,5; 15)$
- 4) $[2,5; 15)$

15 $3^{|x-3|} \leq 1$

- 1) $(-\infty; 3)$
- 2) 3
- 3) $[3; +\infty)$
- 4) -3

16 $\log_{0,5}(7-x) < 0$

- 1) $(-\infty; 7)$
- 2) $(6; 7)$
- 3) $(-\infty; 6)$
- 4) $(6; +\infty)$

V. Գնացքը A -ից B 600 կմ ճանապարհն ըստ չվացուցակի պետք է անցներ 10 ժամում:
Չարժումն սկսելուց 4 ժամ հետո գնացքը C կայարանում հարկադրաբար 1 ժամ
կանգնեց, որից հետո ավելացնելով նախատեսված ազությունը՝ ժամանակին
հասավ B կայարան:

17

Քանի՞ կմ/ժ է գնացքի արագությունն ըստ չվացուցակի:

- 1) 150
- 2) 70
- 3) 60
- 4) 80

18

Քանի՞ կմ է AC հեռավորությունը:

- 1) 200
- 2) 240
- 3) 280
- 4) 320

19

Գնացքը CB ճանապարհահատվածը քանի՞ կմ/ժ արագությամբ անցավ:

- 1) 75
- 2) 64
- 3) 72
- 4) 68

20

Ինչքա՞ն ժամանակ ծախսեց գնացքն AB ճանապարհի առաջին կեսն անցնելու
համար:

- 1) 5ժ 50ր
- 2) 4ժ 50ր
- 3) 5ժ 45ր
- 4) 5ժ

VI. Տրված է $f(x) = \frac{4x-1}{x-2}$ ֆունկցիան:

21 Գտնել f ֆունկցիայի որոշման տիրույթը:

- 1) $(2; +\infty)$
- 2) $(-\infty; +\infty)$
- 3) $[1; +\infty)$
- 4) $(-\infty; 2) \cup (2; +\infty)$

22 Գտնել f ֆունկցիայի ածանցյալը:

- 1) $-\frac{7}{(x-2)^2}$
- 2) $\frac{4x+1}{(x-2)^2}$
- 3) $\frac{-9}{(x-2)^2}$
- 4) $\frac{4}{x-2}$

23 Գտնել f ֆունկցիայի կրիտիկական կետերը:

- 1) 2
- 2) 9
- 3) չունի
- 4) 4

24 Գտնել f ֆունկցիայի նվազման միջակայքերը:

- 1) $(-\infty; 2) \cup (2; +\infty)$
- 2) չունի
- 3) $(-\infty; 2) \cup (2; +\infty)$
- 4) $(-\infty; 0)$

VII. Զուգահեռազօծի անկյունազիծը հավասար է նրա կողմերից մեկին, մեծ կողմը 8 է, անկյուններից մեկը՝ 45^0 :

25 Գտնել զուգահեռազօծի փոքր կողմի երկարությունը:

- 1) 4
- 2) $4\sqrt{2}$
- 3) 6
- 4) 8

26 Գտնել զուգահեռազօծի մակերեսը:

- 1) 40
- 2) 20
- 3) $32\sqrt{2}$
- 4) 32

27 Գտնել զուգահեռազօծի մեծ անկյունազիծի երկարությունը:

- 1) 4
- 2) $4\sqrt{2}$
- 3) $4\sqrt{10}$
- 4) $4\sqrt{5}$

28 Գտնել զուգահեռազօծի փոքր կողմին տարված բարձրության երկարությունը:

- 1) $4\sqrt{2}$
- 2) 6
- 3) 8
- 4) 4

VIII. Կոնի ծնորդի երկարությունը 8 է և հիմքի հարթության հետ կազմում է 30° անկյուն:

29 Գտնել կոնի բարձրությունը:

- 1) $4\sqrt{2}$
- 2) $4\sqrt{3}$
- 3) 4
- 4) 6

30 Գտնել կոնի հիմքի շառավիղը:

- 1) 6
- 2) $4\sqrt{3}$
- 3) $4\sqrt{2}$
- 4) 7,5

31 Գտնել կոնի ծավալը:

- 1) $\frac{64\sqrt{2}\pi}{3}$
- 2) 64π
- 3) 192π
- 4) $\frac{32\pi}{3}$

32 Գտնել կոնի գագաթով անցնող հարթությամբ այն հատույթի մակերեսը, որն ամենամեծն է:

- 1) $16\sqrt{3}$
- 2) 32
- 3) $32\sqrt{3}$
- 4) 16

IX. Տրված են $A(2; 1)$, $B(-4; 2)$ և $C(-5; -4)$ կետերը:

33

Գտնել $\overrightarrow{AB} + \overrightarrow{BC}$ վեկտորի կոորդինատները:

- 1) $\{-7; -5\}$
- 2) $\{-7; 7\}$
- 3) $\{-5; 7\}$
- 4) $\{7; 7\}$

34

Գտնել \overrightarrow{AC} վեկտորի երկարությունը:

- 1) $2\sqrt{6}$
- 2) $3\sqrt{2}$
- 3) $\sqrt{74}$
- 4) $\sqrt{78}$

35

Գտնել \overrightarrow{AB} և \overrightarrow{BC} վեկտորների կազմած անկյունը:

- 1) 90°
- 2) 45°
- 3) 60°
- 4) 30°

36

Գտնել b -ն, եթե հայտնի է, որ C կետը գտնվում է $y = 2x + b$ ռեղի վրա:

- 1) 9
- 2) 1
- 3) 14
- 4) 6

X. Կատարել առաջադրանքները.

37

(a_n) թվաբանական պրոգրեսիայում $a_1 = 6,8$ $a_n = 12,2$ $S_n = 95$: Գտնել n -ը:

38

Գտնել $a_n = 23 - 3n$ ընդհանուր անդամն ունեցող հաջորդականության դրական անդամների քանակը:

39

Գտնել 6-ի բազմապատիկ բոլոր երկնիշ թվերի քանակը:

40

Գտնել այն բնական թիվը, որը հավասար է իրեն նախորդող բոլոր բնական թվերի գումարի $\frac{1}{8}$ -ին:

XI. Տրված է $\log_2 x^2 \leq 16$ անհավասարումը:

41

Գտնել անհավասարմանը բավարարող բոլոր ամբողջ թվերի գումարը:

42

Գտնել անհավասարման ԹԱԲ-ին չպատկանող թվերի քանակը:

43

Գտնել անհավասարմանը բավարարող ամենամեծ ամբողջ թիվը:

44

Գտնել անհավասարման լուծումների բազմությանը պատկանող բոլոր ամբողջ թվերի քանակը:

XII. Տրված է $f(x) = |x-1| + a$ ֆունկցիան, որտեղ $a < 0$:

45 Շի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

1. $f(a+1) = 0$:

2. $[1-a; +\infty)$ միջակայքում ֆունկցիան աճող է:

3. Ֆունկցիայի գրաֆիկը չունի համաչափության առանցք:

4. Ֆունկցիան ունի էքստրեմումի երեք կետ:

5. Գոյություն ունեն x -ի երեք արժեք, որոնց դեպքում ֆունկցիայի արժեքը հավասար է $-a$ -ի:

6. Ֆունկցիայի ածանցյալը $x = 1 + a$ կետում հավասար է 0-ի:

Բ ՄԱԼԱՐԴԱԿ

XIII. Գիրքը բաղկացած է երկու բաժնից, ընդ որում, առաջին բաժինը 20 էջով ավելի է գրքի կեսից և 20 % ավելի էջ ունի, քան երկրորդ բաժինը:

46

Քանի՞ էջով է գրքի առաջին բաժինը ավելի գրքի երկրորդ բաժնից:

47

Օրական հավասար էջեր կարդալով՝ աշակերտը քանի՞ օրում կկարդա ամբողջ գիրքը, եթե առաջին բաժինը կարդում է 12 օրում:

48

Քանի՞ էջ ունի գիրքը:

49

Քանի՞ թվանշան է գրվել գրքի առաջին բաժնի էջերը համարակալելիս:

XIV. Հավասարասուն սեղանի հիմքերը հարաբերում են ինչպես 3:4, իսկ բարձրությունը 14 է:
Սեղանի միջին զիծը հավասար է նրա բարձրությանը:

50

Գտնել սեղանի անկյունագծերի կազմած անկյան աստիճանային չափը:

51

Գտնել սեղանի փոքր հիմքի երկարությունը:

52

Գտնել սեղանի մակերեսը:

53

Գտնել սեղանին արտագծած շրջանագծի շառավղի երկարությունը:

XV. Գտնել արտահայտության արժեքը.

54

$$x_1^2 x_2 + x_2^2 x_1, \text{ եթե } x_1\text{-ն և } x_2\text{-ը } x^2 - 6x + 3 = 0 \text{ հավասարման արմատներն են:}$$

55

$$\sqrt{28-10\sqrt{3}} + 5 + \sqrt{3}$$

56

$$169 \sin\left(2 \arcsin \frac{5}{13}\right)$$

57

$$\log_{\sqrt{2}} 5 \cdot \log_{\sqrt{5}} 3 \cdot \log_3 4$$

XVI. Տրված է $(a-1) \cdot 4^{-|x|} - 10 \cdot 2^{-|x|} + 1 = 0$ հավասարումը (a -ն պարամետր է):

58

Գտնել a -ի այն արժեքը, որի դեպքում $\log_2 3$ թիվը հավասարման արմատ է:

59

Գտնել a -ի այն թվական արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումը ունի ճիշտ երկու արմատ:

60

Գտնել a -ի այն արժեքը, որի դեպքում հավասարումը ունի ճիշտ երեք արմատ:

61

Գտնել a -ի այն թվական արժեքների քանակը, որոնց դեպքում հավասարումը ունի ճիշտ չորս արմատ:

XVII. Կատարել առաջադրանքները.

62

Զուգահեռ ուղիղներից մեկի վրա նշված է 6, իսկ մյուսի վրա՝ 4 կետ: Քանի՞ եռանկյուն գոյություն ունի, որոնցից յուրաքանչյուրի երեք գագաթներն էլ նշված կետերից են:

63

0;1;2;3;4;5 թվանշաններից կազմվում են բոլոր հնարավոր հնգանիշ թվերը (առանց թվանշանների կրկնության): Դրանցից քանի՞սն են 5-ի բազմապատիկ:

XVIII. Տրված է $|\cos x| = |\cos 3x|$ հավասարումը:

64

Շի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

1. $\frac{17\pi}{4}$ -ը հավասարման արմատ է:
2. Հավասարումը համարժեք չէ $\cos x = \cos 3x$ հավասարմանը:
3. Հավասարումը համարժեք է $\begin{cases} \cos x = \cos 3x \\ \cos x = -\cos 3x \end{cases}$ համակարգին:
4. Հավասարումը համարժեք է $\sin 2x = 0$ հավասարմանը:
5. Հավասարումը $[0; 14]$ միջակայքում ունի ճիշտ 17 արմատ:
6. Հավասարման յուրաքանչյուր արմատի համաչափը կոորդինատների սկզբնակետի նկատմամբ այդ հավասարման արմատ է:

XIX. $ABCDA_1B_1C_1D_1$ խորանարդի անկյունագծի երկարությունը 9 է:

65 Տի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

1. A_1C անկյունագիծն ուղղահայաց է AB_1D_1 հարթությանը:

2. AB_1D_1 հարթությամբ հատույթի մակերեսը $27\sqrt{3}$ է:

3. A_1C և BB_1 խաչվող ուղիղների հեռավորությունը $1,5\sqrt{6}$ է:

4. BD և A_1C ուղիղների կազմած անկյունը 45^0 է:

5. D գագաթի հեռավորությունը A_1C անկյունագծից $2\sqrt{2}$ է:

6. AB_1D_1 և BDC_1 հարթությունների հեռավորությունը 2 է: